## ՅԻՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՌԱՋ

### ԱՄԵՆ Ս. ՊԱՏՐԻԱՐՔ ՀՕՐ ՊԱՏԱՀԱԾ ԱՐԿԱԾԻ ՄԱՍԻՆ

*Ցաւելով կը հաղորդենք հետեւեալ ծանօթութիւնները առքի այն արկածին մասին, որուն ենթարկուեցաւ Ամեն. Տ. Թորգոմ Ս. Պատրիարք Հայրը, եւ որուն մասին գրել սկսան արդէն արտասահմանի հայ թերթերը։*

*Սրբազանը, Դեկտեմբեր 18ի Շաբաթ առաւօտուն, քանի մը օրուան հանգիստի համար Երիքով էր գացած Տ. Տիրայր Վարդապետի ընկերակցութեամբ (այժմ Ծ. Վրդ. ի Գալիֆորնիա, Ծ. Խ.), երբ երկու օր ետքը, Երկուշաբթի առաւօտ, պանդոկին վերնայարկէն գետնայարկի սրահը իջած ատեն, սանդուխին վերջին աստիճաններուն վրայ յանկարծ սահելով, սրունքին վարի մասը, ներբանէն իբր տասը սանդիմ վերով, կոտրուեցաւ, անտանելի ցաւ պատճառելով Սրբազանին։ Անմիջապէս կանչուեցաւ տեղւոյն միակ բժիշկ Հրէուհին, որ նախնական դարմանները կատարելէ վերջ զգացուց սակայն Երուսաղէմ փոխադրութեան անհրաժեշտութիւնը։ Հեռաձայնով անմիջապէս լուր տրուեցաւ Ս. Աթոռ, ուսկից Տ. Մեսրոպ Ս. Արք. եւ վանուցս բժիշկը՝ Տքթ. Եղալեան եւ քարտուղար Պր. Կարպիս մէկ ժամ յետոյ արդէն ժամանեցին Երիքով, միասին բերելով նաեւ հիւանդանոցի փոխադրակառք մը։ Նոյնքան կարճ ժամանակի մէջ եւ ամենայն զգուշութեամբ, Ն. Ամենապատուութիւնը եւ ամէնքը հասան Ս. Քաղաք, ուր Ֆրանսական հիւանդանոցին մէջ Ք-ճառագայթով լուսանկարը հաստատեց արկածին ճշգութիւնը եւ հանգամանքը։ Իրիկուան դէմ հարկ եղաւ Սրբազանը ենթարկել ամբողջական անզգայացումի մը, որուն միջոցին սրունքին դիրքը յաջողապէս վերահաստատուեցաւ բժշկապետ Տքթ. Գաուէրի ձեռքով եւ ամբողջ ոտքը գաճի մէջ սեղմուեցաւ։ Այդ օրէն ի վեր, Սրբազան Հայրը կը հանգստանայ նոյն հիւանդանոցին մէջ, անշարժ, վայելելով գիտութեան բովանդակ խնամքը եւ Ս. Աթոռոյ անթերի հոգածութիւնը։ Կարգ ու կարգ ամէն օր կ'այցելեն իրեն, բացի Տ. Մեսրոպ Սրբազանէ, որ օրուան մէջ երկիցս կ'երթայ ի տես, Միաբանութեան բոլոր անդամները, վարդապետներ, սարկաւագներ եւ ժառանգաւորներ։ Այցելեցին նաեւ Լատինաց Պատրիարքը, Յունաց Ս. Պատրիարքին բացակայութեանը՝ Վասիլիոս Արքեպիսկոպոս, Ֆրանչիսկեանց պետին փոխանորդը, Անկլիքան Եպիսկոպոսը, Ղպտի, Ասորի եւ ուրիշ միաբանութիւններէն պատուիրակութիւններ, ինչպէս նաեւ Երուսաղէմի պետական բարձրագոյն վարչութենէն եւ Երուսաղէմի կառավարչութենէն ներկայացուցիչներ, Օմարի մզկիթի մեծ Շէյխը, եւայլն։*

*Առաջին ցաւագին օրերը անցած են արդէն, ուռեցք, տենդ եւայլն գրեթէ չէ ունեցած. բուժումի գործը կը կատարէ իր բնական ընթացքը եւ բժիշկը կը վստահացնէ թէ հարկադրեալ տեւղութեան մէջ Ն. Ամենապատուութիւնը պիտի բուժուի Աստուծով, եւ վերադառնայ ի գլուխ իր պարտականութեանց։*

### ԱՄՍՕՐԵԱՅ ԼՈՒՐԵՐ

*Իր գահակալութեան է. տարեդարձին առթիւ, 1 Դեկտ.ի Դշ. օրը, Ս. Պատրիարքը մերժեց հանդիսական եւ հանրային խմբումներ, բայց ընդունեց Պատ. Միաբանութիւնը, պաշտօնէութիւնը եւ աշակերտութիւնը, որոնք իրենց շնորհաւորական յարգանքը մատուցին իրեն Պատրիարքարանի մեծ դահլիճին մէջ։*

*Եշ. 9 Դեկտ. — Տ. Զգօն Վրդ. (այժմ Եպս. յԱմերիկա, Ծ. Խ.) ընտրուած ըլլալով Առաջն. Փոխանորդ Մարսէյլի թեմին, վաղուան իր մեկնումին առթիւ, երեկոյեան Պատրիարքարանի սրահներէն մէկուն մէջ ողջերթի Միաբանական համախմբում մը տեղի ունեցաւ։ Սրտագին մաղթանքի խօսքեր ըրին իր եղբայրակիցները. օրհնաձայն խրատներ խօսեցաւ Ս. Պատրիարք Հայրը։ Տ. Զգօն Վրդ. պատասխանեց սրտաղեղ զգացմամբ. յետոյ ամէնքն ի միասին երգեցին «Աշակերտք Քրիստոսի» շարականը։*

**(«Սիոն», 1938, ԺԲ. Տարի, Յունուար, (Թիւ 1, էջ 31-32)։**

digitised by A.R.A.R.@